

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2018-3-1-Ա

ք. Երևան

10.05.2018թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2018 թվականի մայիսի 10-ի նիստում քննարկեց 2018 թվականի մարտի 22-ին «Կայծ լայն» ՍՊԸ-ի (Երևան, Զեխովի 29/6, AM) կողմից ներկայացված բողոքը (հայտ No20170384) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված համակցված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 38-րդ դասի ծառայությունների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «HOME NET» («Մեջիկ վեյ» ՍՊԸ, ք. Երևան, Ֆուչիկի 57/1, բն. 17, AM, N 21340, գր. 10.04.2014) ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 132-րդ կետի համաձայն համակցված ապրանքային նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարրերի նմանության հարցն առանձին վերցրած: Տվյալ դեպքում նման տարրեր են հանդիսանում համեմատվող ապրանքային նշաններում ներառված «HOME» բառային տարրերը: Ինչպես նաև հայտարկված համակցված ապրանքային նշանը նույնական է գրանցման ներկայացված «HOME SYSTEMS» («Մուլտի քաստ» ՍՊԸ, ք. Երևան, Ավան Քուչակի 48/55,

AM, N 20170383, 17.03.2017), «HOME NET» («Մարինկա» ՍՊԸ, ՀՀ Արարատի մարզ, գ. Հայանիստ 25 փ., 1 փկղ., տուն 4, AM, N 20170382, 17.03.2017) համակցված ապրանքային նշաններին: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշանները նույնական են թե՛ իրենց «HOME» բառային տարրով, թե՛ պատկերային մասի ոճավորմամբ՝ «O» տառի մեջ օգտագործված տնակի պատկերով և թե՛ գունային համակցությամբ: Ինչ վերաբերվում է «NET», «SYSTEMS» և «TV» բառերին, ապա նրանք չունեն տարբերակիչ հատկություն և ենթակա չեն առանձին գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ ՀՀ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և Կարգի 90-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հանդիսանում են նկարագրական բնույթի նիշ՝ բնութագրելով մատուցվող ծառայության ստեղծման նպատակը:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթը և բողոքարկողի կողմից ներկայացված նամակ-համաձայնագիրը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մասնակի բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումը մասնակի չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանի վկայագիր տալու մասին՝ 38-րդ դասի «հեռուստահեռարձակում» ծառայության համար:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

**Ո Ր Ո Շ Ե Ց**

Բողոքը մասնակի բավարարել, կրկնական փորձաքննության որոշումը մասնակի չեղյալ ճանաչել և (հայտ No20170384) ապրանքային նշանի վկայագիր տալ 38-րդ դասի «հեռուստահեռարձակում» ծառայության համար:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԱԽԱԳԱՀ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԶԻԶՅԱՆ